



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2020թ. թիվ 480-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԵՎ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՍՏԱՑՎՈՂ
ԴԵՂՈՐԱՅՔԻ ՍՏԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ԹԻՎ 108-Ա ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված հիվանդների դեղապահովումը կանոնակարգելու և Լոռու մարզի առողջապահական կազմակերպությունների համար պետության կարիքների համար ձեռք բերվող և մարդասիրական օգնության ճանապարհով ստացվող դեղորայքի ստացման, պահպանման և բաշխման աշխատանքները կազմակերպելու նպատակով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ եմ.

1. Ստեղծել Լոռու մարզի առողջապահական կազմակերպությունների համար պետության կարիքների համար ձեռք բերվող և մարդասիրական օգնության ճանապարհով ստացվող դեղորայքի ստացման, պահպանման և բաշխման աշխատանքները կազմակերպող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) ապահովել պետության կարիքների համար ձեռք բերված դեղերի ստացումը ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև՝ դրանց տեղափոխումը և ներմարզային բաշխումը:

2) պարբերաբար ուսումնասիրել ստացված դեղերի մնացորդները և ավելցուկի դեպքում իրականացնել ներմարզային վերաբաշխում:

3) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 15-օրյա ժամկետում ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել առողջապահական ընկերություններից հավաքագրված դեղերի եռամսյակային ծախսի, մնացորդի և հաշվառված հիվանդների քանակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզի առողջապահական կազմակերպությունների տնօրեններին՝

յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 7-օրյա ժամկետում ՀՀ Լոռու մարզպետարան ներկայացնել դեղերի եռամսյակային ծախսի, մնացորդի և հաշվառված հիվանդների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. ապրիլի 27-ի թիվ 926-Ա հրամանով հաստատված հավելվածների:

4. ՀՀ առողջապահության նախարարությունից հատկացվող դեղորայքի ստացման պարտականությունները դնել «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրենի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:

6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի մարտի 16-ի «Լոռու մարզի առողջապահական կազմակերպությունների համար պետության կարիքների համար ձեռք բերվող և մարդասիրական օգնության ճանապարհով ստացվող դեղորայքի ստացման, պահպանման, բաշխման և ՀՀ Լոռու մարզպետի 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 27-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 108-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՅԱՆ

Ա.ԴՈՒԿԱՅԱՆ

2020թ. հունիսի 26
ք.Վանաձոր

Կ Ա Ձ Մ

Լոռու մարզի առողջապահական կազմակերպությունների համար պետության կարիքների համար ձեռք բերվող և մարդասիրական օգնության ճանապարհով ստացվող դեղորայքի ստացման, պահպանման և բաշխման աշխատանքները կազմակերպող հանձնաժողովի

Ա.Գուլանյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության

և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Ա.Ղուլիջանյան - հանձնաժողովի քարտուղար, «Լոռու մարզային հոգեոնկրոնական հիսպաններ» ՊՓԲԸ-ի տնօրեն

Հանձնաժողովի անդամներ.

Կ.Կիրակոսյան - «Լոռու մարզային հոգեոնկրոնական հիսպաններ» ՊՓԲԸ-ի դեղագործ

Է.Պիրոգովա - «Լոռու մարզային հոգեոնկրոնական հիսպաններ» ՊՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ

Հ.Հովսեփյան - «Լոռու մարզային հոգեոնկրոնական հիսպաններ» ՊՓԲԸ-ի հաշվապահ-գանձապահ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ